

դէմի Թէոդորոս Պատրիարքի կողմէ առ Շու-
մէնցիս: Սկիզբն է՝ «Ի սուրբ եւ փառաւո-
րեալ...»: Իր օրհնութեանց շարքին կը լինէ
Շումէնի մէջ «Սրբոյ Տանն երախտաւոր,
բազմաշխատ եւ հաւատարիմ զանձապետ սի-
րելոյն մերում յԱստուծոյ օրհնեալ Մարա-
րաբեկաշտի...»: Ապա խօսելով Երուսա-
ղէմի զանձանակի արդիւնաւորման մասին՝
կը շարունակէ. «... եւ ահա յայսմ ամի բստ
հանապաղորդական բարի սովորութեան ձե-
րում զբոլոր տար(ւ)ոյ նուէրս եւ զընծայս
զանձանակի ողորմութեանց ձերոց՝ հաւա-
քեալ ի մի առաքեալ էիք հարիւր եւ քառա-
սուն զուշ ձեռամբ զանձապետ Մարաւո բա-
րիսիրից եւ Սուրբ Երուսաղէմի ծայրագոյն
նուիրակի Կարապետ Եպիսկոպոսին...»:

Վերջը՝ «Գրեցաւ Օրհնութեան եւ Շնոր-
հակալութեան գիրս ի վայելչադարգ մայրա-
քաղաքս Սուրբ Երուսաղէմ, ընդ հովանեաւ
Սրբոց Յակոբեանց տիեզերափայլ Աթոռոյս
ամենայն Հայոց: Ի թուին ՌՄՃԷ (= 1880)
Ապրիլի հնգին»:

Ծան. Չեռապիրս այժմ սեփականութիւնն
է Պ. Օննիկ Յովակիմեանի ի Շումէն:

45.

ԳԻՐ ՍԻՐՈՅ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԴԱՆԻԷԼ
ՊԱՏՐԻԱՐԳԻ

Բարակ եւ ողորմ բուրք, երկծալ. Մեծնիթիւն՝
47 X 35 սմ. ամբողջ. իւրաքանչիւր ծալք (ԹՈՒՂԹ)՝
35 X 23½ սմ.: — ԳՐՈՒԹԻՒՆԸ՝ միասին՝ 21 X
17½ սմ.: — ՏՈՂՔ՝ 32. գրուած ընտիր նօտրոյով:
ձակաղը՝ կնիք պատրիարքական բոլորածն, մէջտեղը
Յս. Քս. գրերն ու նկարը. եզերքը՝ «Քս.ի ծառայ Դա-
նիէլ վրդպտ. Պատրիարք Կոս. ՌՄՆԸ»:

Գիր Սիրոյ եւ Օրհնութեան Դանիէլ Պատ-
րիարքի Կ. Պոլսոյ, զրուած ՌՄՆԸ (= 1799)
թուին ի Կ. Պոլիս: Սկիզբն է. «Յիսուսի
Քրիստոսի ծառայ Տէր Դանիէլ Արքեպիսկոպոս
եւ շնորհիւ Սրբոյ հոգւոյն պատրիարք մեծի
մայրաքաղաքիս Կոստանդնուպոլսոյ. Յորմէ
ժամանեալ հասցէ գիր օրհնութեան եւ նա-
մակ պահպանութեան. հնաւանդ... սիրե-
լեացդ իմոց՝ մաքրասուն Տէր Մարտիրոս եւ
Տէր Մարկոս քահանայից եւ բարեպաշտն
խօսայ Մելքոն Աղայից... ծանուցումն լիցի
սիրելեացդ իմոց...»:

Վերջը՝ «Գրեցաւ սիրոյ եւ օրհնութեան
նամակս ի ՌՄՆԸ (= 1799) ի հոկտեմբեր Իին
ի Պատրիարքարանս Հայոց ի մեծն Պոլիս ընդ

հովանեաւ հրեշտակապարտ Սուրբ Աստու-
ծածին Եկեղեցւոյ»:

Կողքին՝ նոյն գրով՝ «Հասցէ թուղթս ի
Եաշ, ի ձեռս Տէր Մարկոս Աւաղ Քահանային
եւ Տէր Մարտիրոսին եւ Մելքոն Աղային՝ բա-
րեալ»:

Սեփականութիւն՝ անձնականիս:
(Վերջ:) Ե. ԳԱՍԱՊԵԱՆ

ՀԻՆ ՀՇՅՈՒՄՆԵՐԻ ԱՐԵՒՄՏԵՆՆ ՍՇՀՄՆԵՐ
ՓՈՔՐ-ՀՇՅՔ ԵՒ ԿՈՂՈՓԵՆԷ (ՍԵՐԵՍՏԻՆ)

ԳՐԵՅ Է. Յ. ՏԱՇԵԱՆ

(Շարունակութիւն):

Այս էր իրաց վիճակը, երբ արեւելք մեծ
փոփոխութիւն մը կրեց՝ Սասանեանց յառնե-
լով (224ի եւ 227ի ձակատները) եւ Պար-
թեաց անկմամբ՝ սասանեան Պարսից զէմ
էին որ պիտի կուտէին այնուհետեւ Հռոմայե-
ցիք, որոնք նպատակ ունէին այնուհետեւ
պահել միայն իրենց շահածը: Բաւական միջին
են նաեւ այս ատեն Հայոց իրերը, թէեւ մեր
զրահանութիւնէն ունինք Աղաթանգեղոսը՝
որուն պատմական մասը թէեւ յէականս ճիշդ
է, շատ թարմատար է ուրիշ կողմանէ¹⁴:
Այս տեղ կ'ուրուագծենք միայն՝ աւելի պար-
զելու համար Գ. դարու վերջին կէտերը՝
որոնք նշանակալից եղան նաեւ Փոքր-Հայոց
համար:

Արտաշիր՝ հազիւ յաղթած Արտաւանայ
եւ հիմնած Սասանեանց հարստութիւնը,
կ'արշաւէ Մարաստան եւ անկէ Հայաստան՝
ուր փախած էին Արտաւանայ որդիք եւ Պար-
թեաց շատերը: Թէեւ կը յաղթուի (229ին),
Պարսիկը՝ որոնք առաջին օրէն կը պահան-
ջէին Միջագետքն ու Հայաստանը, եւ իրենք
զիրենք հին Աքամենեանց յաջորդ կ'ուղէին
ցուցընել, եւ համեմատութեամբ Պարթեաց՝
շատ ազգայնամոլ ու կրօնամոլ էին, կ'աւերեն
Միջագետքը: Աղեքսանդր Սելեւքոսի արշա-
ւանքն ալ (230—234 տարիները) մեծ օգուտ
չունեցաւ, թէեւ կ'ըսուի երեք թեւով մտաւ
Հայաստան, Միջագետք եւ Պարսկաստան,
որչափ ալ ետ առած կ'ըսուի (ըստ ոմանց

¹⁴ Ուրիշ տեղ քննութեան առած ենք պատմու-
թեան այս շրջանը (Աղաթ., Վիեննա 1891):

միայն) Հեղիագարազու Պարթեաց թողու-
ցած Միջագետաց մասերը: Աւելի յաջող էր
Գորդիանոս կայսեր արշաւանքը (238—244)
ընդդէմ Շապուհ Ա. (241—272), որ ետ առաւ
Շապուհ զրուած Մծրինն ու Խառանը, եւ Մի-
ջագետաց Արորայի քով Շապուհ շարաշար
պարտուելով փախաւ: Սակայն արդիւնքն այն
եղաւ որ Գորդիանոս սպանուեցաւ Փիլիպ-
պոս Արարացիէն (244ին), եւ այս վերջինս
ամօթալի խաղաղութիւն մը գնեց՝ Շապուհ
թողով Միջագետքն, եւ Հայաստան ալ ա-
զատ՝ Շապուհ յարձակման դէմ: Հետեւու-
թիւնն եղաւ Խոսրովայ Հայոց արքայի սպա-
նութիւնը (248էն ետքը), Հայաստանի գրա-
ւումը եւ մանուկ Տրդատայ (Գ.) մերժուելը՝
որ սպաստանեցաւ Հռոմոց (253ին): Եւ
Հայոց զահը հանուեցաւ Արտաւազը մը Պար-
սից կողմէ: Միջագետք առնուեցաւ (միայն
Ուռնայ դիմադրեց), եւ արշաւանքը շա-
րունակուեցաւ մինչեւ Անտիոք՝ որ այրա-
ցաւ եղաւ (258ին), ապա Կիլիկիա եւ Գա-
միրք: Սասանեանց այս եւ նաեւ յաջորդ ար-
շաւանքները միշտ աւերմանց եւ աւարտու-
թեանց արշաւանքներ էին՝ քիչ կամ շատ:
Վաղերիս կայսրը՝ Անտիոքայ առմանէն
ետքը հասած, լիակատար ձախողութիւն
մ'ունեցաւ՝ Միջագետաց մէջ մեծ պարտու-
թիւն մը կրելով եւ Պարսից այն անլուր յա-
ջողութիւնն ընծայելով՝ կայսր մը գերի
րոնելու (260ին, մեծ անդթութեամբ վա-
րուեցան Պարսք Վաղերիանու հետ, † 269):
Բարբարաթութիւն մըն էր որ Հռոմայեցւոց
իրերուն բոլորովին վատթարելուն առջեւը
երցաւ առնուլ՝ Պաղմիւրայի արարացի արքայ
մը՝ Ոտենագոս, որ յաջողեցաւ Եփրատեսիոյ
մէջ խորտակել Շապուհ բանակը, առնուլ
Մծրինն ու Խառանը եւ նոյն իսկ Տիգրոն պա-
շարել (261ին), եւ ասով հոչակեցաւ կայսր
(264ին), բայց մեռաւ Գթաց զէմ մղած պա-
տերազմին մէջ (267ին)՝ որոնք ողորած էին
Փոքր Ասիան՝ մինչեւ Գամրաց աշխարհն ալ:
Սակայն այս արդիւնալից անձին կ'սոջ՝ Չենո-
րիա գլխոյի, որուն կողմն էին Հայք, զէմ
պատերազմեցաւ Աւրեղիանոս եւ Չենորիա
գերի բռնուեցաւ (273ին) եւ հրաշալին Պալ-
միրա քարուքանդ եղաւ: Չարմանալի են
այնուհետեւ ալ այլեւայլ կայսերաց արշա-
ւանքները, որոնք միակերպ վախճան մը
կ'ունենան: Պրոքոս՝ Վաւապ Բ. արքայի
հետ դաշնադրութիւն մը կնքելէ ետքը
(279ին)՝ պատրաստութիւն կը տեսնէ արշա-

ւանքի մը բայց կը սպաննուի (281ին) Կա-
րոս կը մղէ նոյն արշաւանքը: Միջագետք
կը մտնէ, նաեւ Տիգրոն՝ կ'ըսուի՝ կը հասնի,
բայց հոն կը մեռնի (284ին): Որդին՝ Նու-
մերիանոս՝ բանակն ետ դարձուցած ատեն
կը սպաննուի (նոյն տարին): Իրապէս յա-
ջողութիւն ունեցաւ միայն Գիոկղետիանոս,
որ կայսր ըլլալէն ետքը (284) եւ Կարի-
նոսի յաղթելէն ետքը (285)՝ հարկ տեսաւ
կարգադրել արեւելից դործերը եւ արշա-
ւանքի մը ձեռնարկել. բայց Վաւա Բ՝ որ
խաղաղասէր էր, խաղաղութիւն մը կնքեց
այնու դաշամբ որ Տիգրիսէն առդին եղած
երկիրները Հռոմայեցւոց մնան (286ին):
Տրդատ Գ. Մեծ կրնար (թէեւ երկրորդ ան-
գամ՝ բայց այս անգամ միայն իրապէս ամ-
բողջ Հայաստանի վրայ) դահ հանուիլ
(287ին): Սակայն վերջնական խաղաղու-
թիւնը միայն տասն տարի ետքն եղաւ: Ներ-
սեհ (293—302) նորէն ձեռնարկեց աշխար-
հայութեան եւ զրուեց ալ Հայաստանն ու
Միջագետք (295ին): Գիոկղետիանոս խաւ-
րեց Գաղերիոսը, որ աճապարեց՝ բայց իւր
անխոհեմութեամբ նախ ծանր պարտութիւն
մը կրեց (296ին). բայց երբ կրկին զօրաժո-
ղով եղած՝ մեծ բանակաւ Հայաստան մտաւ,
այնպիսի կատարեալ յաղթութիւն մը զործեց
Ներսեհի դէմ, որուն կանայք, բորք եւ որդիք
զերի ինկան, այնպէս որ Ներսեհ ամենամանր
պայմաններն ալ յանձն առաւ (297ին), եւ
այս խաղաղութիւնը տեւեց 40 տարի (մինչեւ
Շապուհ Բ. Մծրնայ վրայ յարձակելը՝ 338ին):

Թէ՛ Հայոց եւ թէ՛ Փոքր-Հայոց համար
այս կարեւոր հաշտութեան կէտերն էին. (ըստ
Պետր. Պատրիկիոսի, Հոկոտ. Գ.) թէ Հռո-
մայեցւոց կը մնայ Անդեղ-տունը (Ինդիլիէնէ)
Ծոփաց հետ, եւ Արգն (Արդանենէ՛ Աղծնիք)
Կորդուաց եւ Ծաւղէից հետ. եւ Տիգրիս
սահման է երկու պետութեանց: Հայաս-
տանի սահմանը կը ձգուի մինչեւ Ծիւնտա
(Չիւնթա) ամրոցը՝ որ Մարաց սահմանին
վրայ էր. Վրաց արքայն ալ Հռոմայեցւոցմէ
առաւ թաղաւորութեան յատուկ նշանակ-
ները: Մծրին ալ շահաստան ըլլայ Տիգրիսի
վրայ¹⁵: Շահը մեծ էր՝ նոյն իսկ խաղաղու-
թեան տեսականութեամբ, նաեւ Հայոց հա-
մար, եւ Տրդատ կրնար խաղաղութեամբ թա-
ղաւորել. Հայոց քրիստոնէութեան դարձը
տեղի ունեցաւ, եւ երկրին հանդամանքներն

¹⁵ Այսինքն՝ վաճառականական պատ քաղաք.
ամէն քաղաք վաճառատեղի չէր:

անով հիմնովին փոխուեցան, Հայոց համա-
կրթութիւնըն այնուհետեւ տեւապէս ըլլալով
Կայսերաց կողմն՝ որոնք նոյնպէս քիչ մ'ետքը
բրխատնեայ եղած էին: Դիտկողեախանոս հոռ-
մէական առանձինն ազդեցութեան ենթար-
կելով այս երկիրները — զորոնք Հոռոմայեցիք
անյատուկ կերպով «Անդրտիգրիսեան» կը
կոչէին, յետոյ պարզ «Աղբք» կամ «Նախարա-
րութիւնք» (Gentes), ուղղակի նահանգ
չըրին, ո՛չ ալ խախտեցին նախարարական
զրուութիւնը՝ որոնք այլեւայլ աշխարհաց բուն
կառավարներն էին, եւ ո՛չ հանուեցան Հայոց
արքայի դերիշխանութեան, մանաւանդ որ
Հայոց արքայք այնուհետեւ ալ աւելի կախում
ունէին Հոռոմայեցիներէն: Ներքին այս վի-
ճակը լաւ կը պատկերացընէ Բուզանդ, թէեւ
կը սկսի Տրդատայ յաջորդով՝ Խոսրով Կոն-
ստանդէ: Բայց պէտք էր թէ՛ այս երկիրներուն
եւ թէ՛ նաեւ Հայոց պահպանութեան համար
զինուորական նոր կազմակերպութիւն մը:
Այս եղած պիտի ըլլայ զլիսաւոր պատճառը
երբ Դիտկողեախանոս, ամբողջ պետութիւնը
նորակազմած ատեն, կարեւոր բարեփոխու-
թիւն մ'ըրաւ՝ Փոքր-Հայքն անջատելով Կապ-
պադովկիայէ իրրեւ անկախ նահանգ, զի-
նուորական հզօր կէտով մը՝ Մելիտինէ՝
իրրեւ մայրաքաղաք¹⁶: Դար մ'ետքը՝ Թէո-
դոս Ա. Մեծ, որ լաւագոյն վարչութեան հա-
մար շատ մեծ նահանգները մանրերու բաժ-
նեց, Փոքր-Հայքն երկու նահանգ ըրաւ՝ հիւ-
սիսային եւ հարաւային բաժիններու: Ա. Հայք
(Armenia prima) եղաւ հիւսիսային բաժինը՝
Սատաղա-Նիկոպօլիս, եւ դարձեալ՝ Կոլո-
նիա, ու Սեբաստիա, որ՝ արդէն կարեւոր
քաղաք մ'եղած՝ այս բաժինն մայրաքաղաքն
եղաւ¹⁷: Բայց անհամեմատ մեծ էր Բ. Հայք
(Armenia secunda), մայրաքաղաք մնալով
Մելիտինէ, որ բաց ի փոքր-հայկական մասէն՝
յաւելուած ունէր Կապպադովկիոյ մասերէն
ալ շատ կտորները: Գոնէ յետոյ կը պարունա-
կուին չըջանքս՝ Մելիտինէ—Արկա—Կոկի-
սան—Արարիսոս—Արիարաթէ—Կուժանա¹⁸:

¹⁶ Հմմտ. Կ. Կիւտերբոզ, «Հոռոմէական Հայաս-
տան եւ հոռոմէական Նախարարութիւնք» Գ. դարէն
մինչեւ 2. դար», Կէտնիգարուք 1900, էջ 23 եւ այլուր:
¹⁷ Հին Կողովինէ ուրեմն Ա. Հայոց կեդրոնը կազ-
մեց. եւ կարելի է թէ արդէն այս ատեն կցուեցաւ նաեւ
Սեբաստուպօլիս չըջանքս, ինչպէս յետոյ կը գտնենք Սե-
բաստուպօլիս Գամբաց նահանգին ալ մաս եղած էր քիչ
մ'աւելի ուշ՝ 106ին Յ. Ք. Տրայանու ատեն:
¹⁸ Հմմտ. Գէյցէք, Սկզբնաւորութիւնք բիւզան-
դական բանակաւորութեան, Վիեննա 1903,
էջ 19 եւ այլուր:

Այս բաժանումս՝ եղած է իրր 378 եւ 386 տա-
րիներու մէջ, որովհետեւ Ամմիանոս որ մին-
չեւ 378 կը հասնի՝ տակաւին մէկ Փոքր-Հայք
դիտէ (Ամմ. ԺԹ, 9, 12. Ի. 11, 4). իսկ
386ին Կայսերական հրովարտակը արդէն
դիտէ Բ. Հայքն եւ անոր քաղաքները կը յիշէ
(հմմտ. Կիւտերբոզ, անդ, էջ 23): Այս վեր-
ջին կէտը սակայն զուգընթաց էր Թէոդոսի Ա. ի
շատ մեծ մէկ սխալին հետ, որ մահացու հա-
րուած եղաւ հին Հայաստանի, այն է՝ բաժա-
նուին Հայոց աշխարհի, զոր պէտք է նախ
տեսնել համառօտիւ իւր պատճառներով:

Շապուհ Բ. (309—379) Կոստանդինոս
Մեծի մահուանէն (338ին) անմիջապէս ետքն
ձեռնարկեց իւր արշաւանաց, որոնք՝ քիչ
ընդհատմամբ՝ 25ամեայ պատերազմ եղաւ
(338—363): Մծրին պաշարուած է սասակա-
պէս գոնէ երեք անգամ (338, 347, 350) բայց
զիմազրեց: Նոյն իսկ առաջարկած Շապուհ
Կոստանդինոս կայսեր՝ իրեն թողուլ պարզա-
պէս Միջագետքն ու Հայաստանը: Բնական է
որ այսպիսի բանակցութիւնք ապարդիւն
պիտի ըլլային (358ին), եւ յաջորդ տարին
սկսաւ սասակագոյն պատերազմը, յատկապէս
Ամիգ պաշարուեցաւ, անուեցաւ եւ քան-
դուեցաւ (359ին): Յաջորդ տարին կ'առ-
նուէր Սինգարա (Մծրինը մէկդի կը թո-
ղուէր), եւ Բղարդէ՝ թէեւ մեծ ոյժ կար այն
տեղ (լեզէոնք՝ Փղաւան Բ, Հայկական Բ,
Պարթեւական Բ եւ Ծաւղէից գունդը,
360ին): Այս ամենայն ստիպեց որ Կոստան-
դինոս կայսր անձամբ գայ արեւելք, եւ Կե-
սարիոյ մէջ տեսակցեցաւ Հայոց Արշակայ
հետ՝ որ եկած էր նախարարօք (360, Սեպտ.)
եւ անցաւ՝ Մելիտինէ եւ Շամշատի գծով՝
յուճահ, տեսաւ Ամիգ աւերածը, բայց
Բղարդէի պաշարումն անյաջող եղաւ, եւ
դարձաւ Անաիոք ձմերելու, ուսկից զրեց
«անդրտիգրիսեան» նախարարաց հաւատա-
րիմ մնալ, նոյնպէս Արշակայ եւ Վրաց
Միհրանայ: Յաջորդ տարին (361) երբ կրկին
Ուոհա հասաւ, Շապուհ հեռացաւ, որով
կայսրն ալ դարձաւ եւ քիչ մ'ետքը ջերմով մե-
ռաւ ի Կիլիկիա: Պատերազմը զուլի հանել
կը մնար Յուլիանոսի, որ Անաիոք գալով
(362ին)՝ ամենայն կաղմութեամբ յաջորդ
տարին ձեռնարկեց արշաւանքին, որ յաջո-
ղութեամբ շարունակուելով մինչեւ իսկ Տիգ-
րոնի գրանց առջեւ, հոն՝ Յուլիանոսի նետա-
հար մեռնելովը (363 Յուլ.) այնպիսի ձայն-
դանքի մը փոխուեցաւ, որուն հետեւութիւնքն

ամէնէն աւելի Հայք տուեցին, որչափ ալ
նախ Հոռոմայեցեց հայէր:

Յովիանոս՝ ամէն գնով խաղաղութիւն
գնելու համար՝ կնքեց այն կորանաց դաշինքը
(363), որով նախ 297ի դաշինքով վաստը-
կածը կիսով կորսուեցաւ, եւ ուրեմն Պարսից
թողուեցաւ Արդն (Աղձնիք), Մոկք, Կոր-
դուք, ու դարձեալ Ծաւղէք եւ Ռէիմինա,
հինգ ամբողջ նահանգ, 15 ամբողջով. դար-
ձեալ բաց ի Սինգարայէ եւ չըջակայից նաեւ
քաջ Մծրինը, որուն ժողովուրդը Յովիանոս
տարաւ Ամիգ բնակեցընելու: Այնպէս որ
ամբողջ սահմանադիժը յետս ընկրկեցաւ դէպ
ի գիծ մը՝ որ Մծրինն ու Դարոյնն կ'երկարէր
մինչեւ Նիմփիոս գետ, որ Մեծ Ծոփքը բաժ-
նելով Աղձնիքէ՝ եղաւ նաեւ սահման Հոռո-
մոց եւ Պարսից: Պարսից ձեռքը ազատ մնա-
ցին «անդրտիգրիսեան» Ծոփք, Հանձիթ, Ան-
գեղ-տուն եւ Մեծ Ծոփք: Դաշնագրութեան
կարեւոր մէկ կէտն ալ էր Հոռոմայեցեց հա-
ւատարիմ Արշակը թողուլ Շապուհ զինուց
առջեւ անպատուար, որ ըսել էր Հայաստանը
յանձնել անոր: Արդիւնքն եղաւ Արշակայ
զերութիւնն եւ Անյուշ բերդը դրուելը. եւ
մինչդեռ Հայոց շատ ամուր տեղեր կրցան
զիմանալ, մանաւանդ Արտաղերս՝ ուր էր
Փատանձեմ զէլոյն եւ ուր արքունի գանձքն
էին՝ բայց տակաւին չհասած Պապ, որ
ապաստանած էր Վաղէսի եւ բնակութիւն ա-
սած ի Նէոկեսարիա եւ զոր կայսեր հրամա-
նաւ Տէրէնտ կը բերէր թաղաւորացընելու,
անուեցաւ նոյնը, ինչպէս նաեւ Արտաշատ
(Բուզ., Դ, ձե. «բար ի բարի վերայ» չմնաց,
կ'ըսէ եւ «անմարդի» Ամմ. ԻՆ, 7, 12 միայն
անուեցաւ կ'ըսէ), Վաղարշապատ, Երուան-
դաշատ, Զարիշատ, Վան եւն (368ին): Վա-
ղէս թաղաւորեցընելով նախ զՊապ, եւ ա-
սոր՝ հոռոմէացի զօրավարին իսկ ձեռօք
սպաննուելէն ետքը (374ին)՝ զՎարազատ,
ցուցուց թէ մէտ էր Շապուհ թողուլ Հայոց
աշխարհը. նոյնպէս կարգադրելով Վրաց
խնդիրը՝ որով Շապուհ նեղուեցաւ, եւ Մի-
ջագետաց կողմն ալ պատրաստելով արշա-
ւանք մը, ուր զլիսաւոր ճակատէ մ'ետքը՝
մանր կռիւներ կը շարունակուէին (մինչեւ
373), յամենայն դէպս կրցաւ բարձր պահել
հոռոմէական ազդեցութիւնը: Եւ նաեւ Շապ-
ուհ անկէ ետքն ըրած ուղղակի առաջարկը՝
Հայաստանը բաժնելու, մերժեց (374ին Ամմ.
Լ, Բ, 19. նաեւ երբ՝ բանակցութեանց շա-
րունակութեանց ատեն՝ տկար գտնուեցան

հոռոմէացի պատգամաւորք անգամ՝ դաւա-
նաց բաժանման որոշման, եւ Շապուհ նոյն
ծրագիրը կ'առաջարկէր կայսեր, կրկին մեր-
ժուեցաւ (375ին): Իրերը պիտի յանգէին մեծ
պատերազմի մը, բայց Պետութեան ուրիշ
կողմանէ վտանգը (Գուլթք ի Թրակիա) ստի-
պեց զՎաղէս զիջող ըլլալու եւ Հայաստան ա-
զատ թողուեցաւ Պարսից առջեւ, նոյն իսկ
լեզէոնները ստիպուած էին Թրակիա խաւ-
րուել: Արքայից արքային եւ կայսեր ալ
մահը՝ յաջորդ տարեաց մէջ (մին 378,
միւսը 379) անորոշ թողուց իրերը, եւ Հա-
յաստան ունեցաւ իսկ զէլոյն մը Զար-
մանդիւտոյ (եւ Մանուէլի Մամիկոնեանց)
խնամակալութիւնը՝ երկու (Պապայ) ար-
քայորդաց՝ Արշակայ եւ Վաղարշակայ ա-
նուամբ, եւ վերջոյս մեռնելէն ետքը՝ Արշա-
կայ թաղաւորութիւնը՝ նոյն իսկ Պարսից հա-
ւանութեամբ: Թէոդոս Ա. Մեծ (379—395)
Գլխաց պատերազմն աւարտելէն ետքն (282ին)
ալ յոյս ունէր (տակաւին 383ին) Հոռոմայեց-
եց շահիլ Հայերը: Բայց իրերը տարրեր ըն-
թացք առին, նոյն իսկ Հայոց միջամտելով,
այսինքն՝ երբ նախարարաց խմբի մը խնդրե-
լով՝ Շապուհ Գ. (383—388) բանակաւ ի
Հայս կը խաւրէ Խոսրով արքայն, որով Ար-
շակ ստիպուած էր քաշուիլ «ի սահման Յու-
նաց» Եկեղեաց դաւառը: Այս ամէնը բնա-
կանաբար Պարսից սպրդելով էր՝ իրենց հին
ծրագրին համար, եւ արդէն Շապուհ բանակ-
ցութեան մէջ էր Թէոդոսի հետ այս նկատ-
մամբ (384): «Այնուհետեւ ալ դեսպանք եւ
հրեշտակք երկուց թաղաւորացն՝ Յունաց եւ
Պարսից, «միմեանց առ միմեանս երթեւե-
կէին», եւ բանակցութեանց արդիւնքն եղաւ
Հոռոմայեցեց եւ Պարսից մէջ բաժնել Հայաս-
տանը (իրր 387ին): Եւ Բուզանդ՝ որ լաւ կը
ստորագրէ այս բաժանումը (2, ա) թէ նպա-
տակը — կամ իրական արդիւնքն — եղաւ
«նախ ընդ երկու բաժանել երկու թաղաւո-
րօքն» եւ յետոյ «ի մէջ արկանել ի ծառայու-
թիւն». թէ այս միջոցին «բաղում գաւառք
կրժեալք հատեալք այսր անդր, եւ մնաց սա-
կաւ մասն յաշխարհաց երկոցունց առ եր-
կոսեան թաղաւորան», որոնք «ի մէջ երկու
բաժնացն սահմանս արկեալ հաստատէին
խաղաղութեամբ» եւն: Այս խաղաղութեան
հետ շատ չի յարմարիր Խոսրոնացեց պատ-
մամբ թէ երկու թաղաւորաց մէջ պատերազմ
ալ տեղի ունեցաւ քիչ մ'ետքը՝ ի հարկէ բուն
Անուոյ գանձուց պատճառաւ. ուր Արշակ յաղ-

թուելով՝ Եկեղեցայ փախաւ, եւ հոն քիչ մ'ետքը մեռաւ (Սոր. Գ., խղ. Եւն): Աւելի բանաւոր էր այս պատերազմը զնել Սուրբովու գահակալութեան սկիզբն, եւ երբ բանակցութիւնք կ'ըլլային բաժանման, երբ Արշակ «մերթեցաւ տեղի իւր շողաւ գնաց ի սահմանս Յունաց» յԵկեղեցայ, ուր «եկին զօրքն Յունաց թաղաւորին ի թիկունս»: Իսկ Պարսից զօրքն օղնական էր Սուրբովու «յԱյրարատ գաւառին» (Բուզ. անդ): Արդէն Սոր. բաժանումը Արկադիոսի (395—408) ատեն կը զնէ՝ ժամանակագրական վրիպական Շապհոյ հետ կապելով: Ընդհանրապէս բաժանման պատմութիւնը ճիշդ է Բուզանդայ քով (Տմտ. նաեւ Կիւտերրոզ, անդ), մինչդեռ յետոյ Պրոկոպիոս (Շին. Գ., 1) վրիպակալից աւանդութիւն մը կու տայ: Իրր թէ Արշակ՝ վերջին Հայ արքայն՝ իւր երկու որդեց Արշակայ եւ Տիգրանի անհաւասար (1:4) բաժնեց թագաւորութիւնը: Արշակ՝ զժոզո՛ մնալով՝ Թէոդոս Բ. կայսեր (408—450) յանձնեց իւր բաժինը՝ պայմաններով, եւ այսպէս նաեւ Տիգրան իւր բաժինը յանձնեց Պարսից: Պարսք եւ Հոռոմք կուուեցան այս առթիւ իրարու հետ, բայց ի վերջոյ միաբանեցան: Այս օրէն Հոռոմայեցի կայսրը զով որ ուզէր իշխան կը զնէր իւր բաժինն Հայոց: Աւանդութիւնս ստեղծուած ըլլայ թերեւս մասամբ չբնեղելու այն պարագան թէ Հոռոմք իրենց բաժինն մէջ շատ շուտ վերցուցին արքայի ստուերը. բայց կարելի է թէ ճիշդ թէ այն մասը թէ անորդի եւ հիւանդագին Արշակ՝ մեռնելէն յառաջ՝ կերպապէս հրաժարեցաւ արքունի իրաւունքներէն յօդուտ կայսեր (իրր 389ին): Իրօք Արշակայ մահը (390) վախճանն էր Հոռոմէական Հայաստանի թագաւորութեան՝ որ կարծ միջոց մը միայն տեւեց: Երկիրը կը կառավարուէր այնուհետեւ փոխարքայներով, որոնց տիրոջն էր «Կոմս Հայաստանի» (Comes Armeniae), երկար ատեն չփոխուելով վարչական ներքին ձեւին կերպը: Պարսից բաժինն մէջ՝ որ անհամեմատ մեծ էր, հինգ անգամ աւելի, տակաւին իրր կէս դար շարունակուեցաւ արշակունի թագաւորութիւնը, մինչեւ որ հոն ալ վերջին Արշակայ գահընկէցութեամբ (428/29ին)՝ Վոսամ Ե. Գոռի (420—438) ձեռօք՝ խնդրելով իսկ նախարարաց, տիրեց նման վարչական զրութիւն մը՝ Մարգալանութեամբ: Նախախնամական էր որ այս միջոցն ունեցաւ Վոսամ շապուհ մը, Ս. Սահակ ու Մեսրոպ մը, որոնց գործը՝

— հայ գրի զիւտը եւ աղղային մատենագրութեան հիմնարկութիւնը — ուղղակի փրկարար եղան աղղային համար ամբողջ հայութեան՝ երկու բաժնի մէջ ալ: Սկզբնապատճառ էին հոս ալ Պարսք իրենց անհետատեւութեամբ, որոնք՝ Հայերը ամէն կերպով Հոռոմոց շիմանէն հետու պահելու զխաւտութեամբ՝ շատ կանուխէն սկսած էին հարածելամէն յունագիտութիւն, եւ կ'աշխատէին, յունական մատենաներու եւ ուսուցման ոճնչացման, ներելով միայն ասորականը՝ որ իրենց ձեռքին տակն էր: Կ. Պոլսոյ արքունիքը՝ Թէոդոսի Մեծի սխալը՝ դարմանեց մասամբ անով որ հետատեւութեամբ ներեց ու օժանդակեց հայ գաղութեան զարգացման իւր բաժնին մէջ (պատգամաւորութիւն Վարդանայ եւ Մեսրոպայ Եւն, 420/21ին), որով Հայք սերտիւ կապուած մնացին արեւմտեան քաղաքակրթութեան: Աւելի մեծ էր Պարսից սխալը՝ Ե. դարու կրօնական հարածանքը, թէեւ Հոռոմայեցիք նաեւ անկէ չօգտուեցան. վասն զի ամէն անգամ Պարսք կրցան՝ այս ամբողջ միջոցին՝ դերակշռութիւն մը ցոյց տալ, եւ Հոռոմայեցիք չափազանց զիջող եղան անոնց ամէն պահանջներուն, ինչ ալ ըլլայ պատճառը: Վոսամ Գոռ նոյնքան օգտուեցաւ պատերազմէն, որչափ ալ Աղանայ մէջ սկսուած Միջագետք փոխադրուած պատերազմը ի վերջոյ գոնէ անորոշ էր, եւ Թէոդոս Բ. (408—450) ստիպուեցաւ համբաւաւոր «հարիւրամեայ» խաղաղութիւնը կնքել (421ին), որ ամենեւին արդելք չէր որ Յարկերտ նորէն Միջագետք յարձակէր եւ աւերէր, եւ նոյն Թէոդոս ստիպուէր մեծ տուգանօք խաղաղութիւն գնել՝ յանձնելով նոյն իսկ Հոռոմայեցուց երկիր ապաստանած քրիստոնեայքը (440/41ին), կնքելով այս դաշինքը Անատոլիայ սպարապետի ձեռօք: Ե. դարու հայ մատենագիրք կ'ամբաստանեն այս ստրատեւականներն, որոնք իրենց աղղեցութիւնը կը սկսին ցուցնել արդէն կանուխէն (— 387ին բաժանման զլիաւոր բանակցողը կ'ըսուի նոյնպէս Ստիլիքոն, որ մեծ դեր խաղացող զօրավար մըն էր): Իրրեւ բուն պատճառ կայսերաց թուլութեան, եւ թէ անոնց խորհրդով էր որ Թէոդոսի Բ. մահէն ետքը՝ Մարկիանոս չուղեց լսել Հայոց խնդրերը: Յամենայն զէպս մոռնալու չէ Հոռոմայեցուց պետութեան վիճակն ալ ընդհանրապէս, որուն վտանգը նուազ չէր ճիշդ արեւմուտքէն եւ կեղբոնին ալ քթին տակ: Նոյն Անատոլեան էր որ ստի-

պուած էր մայրաքաղաքին մօտ հասնող Հոնրէն խաղաղութիւն գնել՝ նոյն իսկ հարկի ձեւով (443ին), թողլով Աղղաց զաղթականութեան յարածուն վտանգը: Այսու հանդերձ իրապէս «ամենամեծ քաղաքական սխալ» եւ «անհասկանալի կուրուքիւն» (Գէլցեր) եղած է Թէոդոսի Մեծի իսկ հաւանումն այն բաժանման, որ ամենաչնչին զո՛՛ մըն էր Հոռոմայեցուց համար: Ի վերջոյ Հոռոմայեցուց ձեռքն ինկան միայն երկու նահանգը՝ ըստ Սոր. Ալիս. «Բարձր Հայք» եւ «Գ. Հայք» (ուշ ժամանակի բաժանմանց համեմատ): Արդ ասոնցմէ Ծոփականք (— «Նախարարութիւնք» կամ «Աղղք»՝ Ծոփք Ծահէի, Անձիր, Անդեղ-տուն եւ Մեծ Ծոփք») արդէն առանձնապէս հոռոմէական աղղեցութեան ենթարկուած էին շատոնց (297ին դաշինք, մնացած 363ին ալ): Բաժանման ժամանակ՝ Արշակէն անելով՝ այս «Աղղաց» վրայ աւելցան (387ին) Հաշտանք եւ փոքր Բարհապիտ, ապապայ «Գ. Հայոց» մեծադոյն մասը: Մնացեալ փոքր մասն եւ ապապայ «Բարձր Հայք»՝ Արշակին բաժինն էր, ուստի կը պարունակէր նաեւ Սորձեան եւ Պարնատուն (ապապայ Գ. Հայոց), ինչպէս բուն Բարձր Հայքը՝ այսինքն էապէս Կարին, Գերջան եւ Եկեղեցայ՝ յարակից դաւառներով (Գարնաղի, Ասիւժ, Մնձուր, Մանանաղի, Սպեր եւ Շաղագոմ), չհաշտելով՝ դաւառացս այլեւայլ բաժանմամբ յետոյ ծաղած դաւառներ («Գ. Հայոց» մէջ յետոյ Գէլիք, Գորէք եւ Սոգան): Այս էր միով բանիւ ամբողջը, որ Արշակի մահուանէ ետքը (390/91ին սկսեալ) կը կառավարէին՝ Կոմսեր (Comes Armeniae) իրրեւ փոխարքայ, իրենց վերին հսկողութեան ներքեւ ունենալով թէ՛ «Նախարարութիւնքն» (Ծոփականք) եւ թէ՛ «Մեծ Հայք» (Armenia magna)՝ ինչպէս կը կոչէին Հոռոմայեցիք Բարձր-Հայոց մասը, յետոյ նաեւ «Ներքապոյն» (Inferior): Այս անուանակոչութիւնք Հոռոմէական են, իսկ Հայոց քով միաբանքներ կ'երեւան՝ որ բնական էր (Տմտ. Եղիշ. տպ. 1859, էջ 72 Վասակ Մամիկոնեան «սպարապետ էր Ստորին Հայոց»): Ուրիշ կողմանէ մոռնալու չենք որ գոնէ մէկուկէս դար այս Հոռոմէական Հայաստանը վարչապէս կապ չունէր բուն հոռոմէական «Փոքր-Հայոց» (Ա. եւ Բ. Հայք) հետ, եւ ո՛չ ալ նախնիք կգամ՝ հոռոմէական իրաւանց իմաստով: Վասն զի նախարարական զրութիւնը չփոխուեցաւ, եւ նախարարք իրական վարիչ եւ

դատաւոր էին իրենց աշխարհաց եւ ունէին նոյնպէս իրենց զինուորական ոյժը՝ որոնց հրամանատարն էին, ուստի վարչական եւ զինուորական իշխանութիւնը պահեցին, բնականապէս իրենց գնդերը տրամադրելի ըլլալով Հոռոմէական բանակի վարչութեանց: Նոյն գիրքն էր ի վերջոյ նաեւ «Պարսկահայաստանի» մէջ (բաժին Պարսից՝ ըստ Յունաց «Պերսարմենիա», զոր չփոխելու չէ «Պարսկահայք» նահանգին հետ Աշխարհագրութեան): Հետեւարար նաեւ Հոռոմէական օրէնք չէին զօրեր հոն, այլ ամենայն ինչ հին աղղային իրաւանց համեմատ էր, բայց ըստ հետեւորդի նաեւ այս բաժնի Հայք հոռոմէական քաղաքացիական իրաւունք ունենալու չեն (Միտտայ, Տմտ. նաեւ Կիւտերրոզ, անդ): «Հայաստանի Կոմս»ն ալ իշխանութեամբ հաւասար ըլլալու էր «Արեւելեան Կոմս»ի հետ, բայց նաեւ փոխարքայական իրաւունքով, եւ անոր համար իրեն զիմուններն ուղղակի կայսեր կ'երթային Եւն¹⁰: Զինուորական տեսակէտով ալ այս Հոռոմէական Հայաստանը զանազանելու է Ա. եւ Բ. Հայքէն: Հայաստանի Կոմս նախ յատուկ բանակ չունէր եւ անոր համար վտանգի ատեն կը դիմէր «Արեւելեան Սպարապետի» («Մագիստրիանոս Զօրաց Արեւելից» Magister militum per Orientem) ստորակարգեալ զինուորական իշխանութեանց: Մասամբ այս տկարութիւնը դարձանելու համար էր որ Թէոդոս Բ. ձեռնարկեց՝ Անագոլեայ ձեռօք՝ Կարնոյ բերդին («Թէոդոպոլսոյ») շինութեան (սկսած 421ին), եւ մշտակայ պահակազուց զրուեցաւ, որ սակայն արդելք մը չեղաւ որ Կաւասայ՝ Պարսից արքայից արքայի ձեռքն իյնայ (502ին): Յետոյ Անաստաս կայսր (491—518) ամբացուց նաեւ քաղաքն եւ կցեց ամրոցին, իսկ Յուստինիանոս ալ աւելի զօրացուց: Եւ սակայն դարձեալ Սուրբովու Փուրսուկի արշաւանաց ատեն (606/8) անձնատուր եղաւ եւ քաղաքին բնակիչներն ալ Ահմատուն փոխադրուեցան (Սեր. Գ., իղ): Սակայն թէ՛ յետոյ եւ թէ՛ յառաջ կարեւոր կենդան էր հոռոմէական իշխանութեան, նոյն իսկ իւր գրիւք, քանի որ պարսկական էին թէ՛ Բասեն (սահմանագիծ՝ Գու գիւղի վրայէն, Կարնոյ կոնակը) եւ թէ՛ Տայք (սահմանագիծ՝ Գեղիկի եւ Արձաթիի միջէն, ուրեմն Կապուտան լեռանց առաջին գաղաթներէն. Տմտ. Փարպեցույ պատմած-

¹⁰ Մանրամատնութիւնքն՝ որ հետաքրքրական են տես Կիւտերրոզի քով:

ները՝ Վահանայ օրերուն, այլ. Վենետ. 1873, էջ 414, 443—446 հեն)։ Եւ անոր համար հաւանական է որ հոն սկսած էր նստիլ նաեւ «Հայաստանի Դուքսը» (Dux Armeniae, հմմտ. Եղիշէի վերոյիշեալ «սպարապետ Ստորին Հայոց»)։ Թէպէտ եւ ըստ ինքեան նաեւ այս Դուքս հրամատարութեան շրջանը բուն Ա. եւ Բ. Հայք եւ Պողեմոնական Պոնտոսն էր, անոր համար բուն տիրոջն էր «Դուքս Կրկին Հայաստաններու» (տակաւին Լեւոնի եւ Ջենոնի օրով՝ 474ին՝ dux utriusque Armeniae), եւ թէ «Արեւելից Մագիստրիանոսի» ընդհանուր սպարապետութեան ներքեւ էր, առանձնապէս «Պոնտական քեմիս» կը վերաբերէր (Diocesis Pontica ի «Գիրք Աստիճանաց»)։ Յամենայն դէպս Հայաստանի բաժանման հետեւութիւն մ'ըլլալու է նաեւ այն որ Թէոդոս Բ. (413ի Սահմանադրութեամբ) ստեղծեց նաեւ «Պոնտական Կոմս» մը (Comes Pontica) ըլլա՛յ նոյնը «Հայաստանի Դուքս»ը՝ որուն իշխանութիւնն աւելի տարածուեցաւ Պոնտոս բանակաթեմի վրայ (ըստ Seekf), ըլլա՛յ այլազգ (հմմտ. Եւրոպ. «Եփրատայ Սահմանադրութիւն», Բ., դ., § 2 եւ այլուր)։ Թողոյ՞ որ ըրիչ մանրամասնութիւնքն, որչափ ալ հետաքրքրական ըլլան, այս անուանակոչութիւններէն եւ նոյն իսկ այն պարագայէն որ հայ զօրավարներ ալ հրամատար էին այս կողմերը, պէտք չէ կարծել թէ արդէն էսպէս հայ գունդեր էին՝ որ կը պահէին Սատաղն ու Մելիտենէն եւ նոր Հոռոմէահայաստանը։ Ընդհակառակը գիտենք որոշ որ ինչպէս յառաջ՝ նոյնպէս «Հայաստաններու Դքսին» բանակն ամենամեծ մասամբ օտարերկրեայ զինուոր էր բաղկանար՝ որոնց այս սահմանադրուող պաշտպանութիւնը յանձնուած էր, թէեւ «սատար» զնդեր կ'առնուէին նաեւ տեղացիներէ, յատկապէս «հեծեալք աղեղնաւորք», «աղեղնաւորք Հայոց» են։ Նոյն իսկ «Լեզէոն Հայական Ա.» եւ «Հայական Բ.» (հմմտ. Ամմիանոս, Ի, Գ, 1) ուղղակի կապ չունին՝ իրենց կազմութեամբ՝ Ա. եւ Բ. Հայոց աշխարհաց բաժանման հետ, թէեւ արդէն Արեւելից Մագիստրիանոսի հրամանին ներքեւ։ Հայ զնդերը, որ ըստ գնահատուած էին կանոնաւոր, կը գործածուէին ըստ պիտոյից ամէն կողմ. «Թիւ (Ala) Բ. Հայոց» կայան ունէր Եգիպտոսի ուլասիսի մէջ անգամ։ Բուն նոր Հոռոմէահայաստանի մէջ ըստ տկար էր անգամ տեւական պահակազուղը, եւ աւելի էր՝ նախարարակոյս զօրքը (հմմտ. վերոյի-

շեալքն, եւ այլուր)։ Իրերը՝ հեռահեռէ՛ փոխուեցան աւելի յետոյ, յատկապէս «Հայկական Բանակաթեմի» ծագմամբ եւ զարդացմամբ։ Հայ զնդերու գնահատման ապացոյց կրնանք առնուլ նաեւ որ արդէն Ջենոնի ատեն «Վարժականք» (scholari) կամ կայսերական պալատան թիկնապահաց գունդը կ'ընտրուէր քաջակորովի Հայերէ (հմմտ. Պրոկոպ., Ծ, 3 ամ. Պատմ. ԻԴ, 16 հեն). եւ նոյնպէս էր նաեւ յետոյ։ Այս ամէնը կը մեկնէ նաեւ Հայոց Արեւելեան Կայսրութեան մէջ խաղացած զերը՝ որ երթալով աւելի մեծ եղաւ, եւ յաճախ՝ նաեւ զերակշիւ։

(Շարունակելի)։

ՄՈՎԱՅ, ԽԻՉԸՆԻ ԵՒ ՅՇՏԸԽԻ ՎԱՆՔԵՐԸ

Մովաց աշխարհը Ռչտունեաց սահմանակից է։ Խիչան Աղձնեաց Գղեղ գաւառն է (աւելի տարածուն). իր կարեւոր բաժանումներն են Սպա(ր)կերտ եւ Մամրտանք։ Իսկ Շատախն է Ջերմածորը։

Այս վայրերու վանքերը Վասպուրականի վանքերու հետ նկատողութեան կ'առնուին, վասն զի ասոնք Աղթամարի կաթողիկոսութեան ենթարկուած են, դարձեալ ժամանակ մը Արժրունիներու հպատակած եւ յետոյ Վանի կուսակալութեան մաս կազմած։

1. ԱԿԵՈՅ ՎԱՆՔԸ

Շատախի մէջ։ Ծանօթ է հետեւեալ յիշատակարաններէն։ «Փառք... զրեցաւ օս (Նարեկ) ի թուականին Հայոց ՋՂԸ (1549) ի յերկիրս Շատխոյ ի վանքս Ակէոյ՝ ընդ հովանեաւ սուրբ Սարգսի գաւրավարին եւ Հայոց Լուսաւորչին սուրբ Գրիգորիս ի հայրապետութեան Տեառն Գրիգորիսի Աղթամարցոյ ձեռամբ... Առաքել վարդապետի» (Ակիւնեան Հ. Ն., Հաւաք. Յիշատ. էջմ. 2088)։ Իսկ 1596ին Սրապիոն կրօնաւորը կը գրէ Աւետարան մը՝ «Ի յերկիրս Շատ(ա)խայ ի վանքն յԱկէոյ, ի դուռն սուրբ Սարգսի գաւրավարին, ի հէրպետութեան Սերապիոն

¹ Համանուն գաւառ մը կայ Վասպուրականի մէջ (հմմտ. Ինճիճեան, Ստորադրութիւն, էջ 163)։

կաթիկոսոսին» (Լալայեանց, Յուլ. հայ. Ջեռ. Վասպ., Ա., էջ 747)։ Ուրիչ Աւետարանի մը յիշատակարանը կը գրուի՝ «Ի Շատախ ի յԱկէոյ վանք ի դուռն սուրբ Սարգսի զօրավարին» (Անդ, էջ 808)։

2. ԱԿՈՒՈՅ ԿԱՄ ԶՈՒՈՅ Ս. ՍՏԵՓԱՆՈՍԻ ՎԱՆՔԸ

Շատախ-Ջերմածոր գաւառի մէջ, Կաղբի գիւղի մօտ (Նօտարք, էջ 168, ծն. 2 եւ էփրիկեան Հ. Ս., Բնաշխ. Բառարան, Բ. էջ 263 եւ Ա. էջ 801)։ Աւետարանի մը արտագրութիւնը 1417ին կ'աւարտի՝ «Ի յերկիրս Ջերմածորոյ ի վանքս Ակոոոյ ընդ հովանեաւ սուրբ Ստեփաննոսի Նախավկային» (Նօտարք, էջ 51 եւ Լալայեանց, Յուլ. հայ. Ջեռ. Վասպ., էջ 300—304)։ Ապա քանի մը տարի վերջը Ստեփանոս կը գրէ Աւետարան մը՝ «... յերկիրս Ջերմածորոյ ի վանքս Փոքր Ակոոոյ ի յառաջնորդութիւն սուրբ ուխտիս Դաւիթ կրօնաւորի...» (Նօտարք, էջ 168)։

3. ԱՄԵՆԱՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԳՈՒԹԵԱՆ ՎԱՆՔԸ

Սպակերտ գաւառակի ժածվանք գիւղի մերձ շինուած է Ամենասուրբ Երրորդութեան վանքը, որ ունի լայնանիստ պարիսպներ, հաստատուն սրմեր եւ կամարակապ առաստաղ։ Ժողովրդական աւանդութեան համեմատ մէկ ու կէս դար յառաջ ունեցած է ճոխ անտեսութիւն եւ փոքրիկ միաբանութիւն։ Ունեցած է նաեւ բաւականաչափ հող եւ բուժարար աղբիւր մը։ Ուխտի օրը՝ Հոգեգալուստի կիրակին (Շէրենց, Սրբավայրեր, էջ 151—152)։

4. ԱՄԵՆԱՓՐԿՁԻ ԿԱՄ ԾՊԱՏԻ ՎԱՆՔԸ

Մովաց աշխարհի սիրուած վանքերէն եղած է Ամենափրկիչ վանքը, որ կոչուած է նմանապէս Ծպատ²։ Շինուած է Մոզք աւանի արեւելեան կողմը՝ Առնջու ձորէն հիւսիս երկարող ձորակի մը մերձ բարձրացող լեռան լանջին։ Մոզք աւանէն մէկ ու կէս ժամ եւ Ատիճանց գիւղէն կէս ժամ հեռու է (Ազգր. Հանդ., 1912, Ա. էջ 99. Բիւզանդիոն, 1904, Թ. 2232)։ Ունի երկու եկեղեցի՝ նուիրուած Ս. Աստուածածնի եւ Ս. Կարապետի։ Երկուքն ալ իրարու կից են, ամուր,

կովիկ, ընդարձակ, սրբատաշ քարով եւ թաղակապ։ Ս. Աստուածածնի եկեղեցոյն հիւսիսային եւ հարաւային պատերուն կից կան հնդական կամարներ։ Ան սիւն չունի եւ երկնիկ է։ Դարպասը ամուր եւ ամփոփ շինութիւն մըն է, բայց խոնաւ ու մութ։

Հետեւեալ արձանագրութեան վկայութեան համաձայն 1570ին Ս. Աստուածածնի եկեղեցին նորոգուած է՝ «Շինեցաւ սուրբ եկեղեցիս ի թվին որ ի ՌԺԹ (1570) յառաջնորդութեան սուրբ ուխտին ի Ներսէս կաթիկոսոսապետին ուսթայ Յովսէփին, Աստուած զկամաւ ետես է... ցող պահէ տէր Ստեփաննոս...»։ Այսպէս կը կարգար այս արձանագրութիւնը Խաչիկ Լեւոնեան 1904ին (հմմտ. Բիւզանդիոն, 1904, Թ. 2232) մինչ Լալայեանց 1912ին հետեւեալ ընթերցուածն ունի՝ «Շինեցաւ սուրբ եկեղեցիս թվ. Հայոց ի ՌԺԹ. յառաջնորդութեան սուրբ ուխտիս Ներսէս կաթիկոսոսին, տէր Սարգիսին, տէր Խէրպետին, հաջ. Կարապետին, ուսթայ Յովսէփին, Աստուած զկամաւ ի...» (Ազգր. Հանդ., 1912, էջ 100)։

Ս. Կարապետի եկեղեցին միւսէն աւելի փոքր եւ նոր է, ինչպէս եւ ամուր ու հնդակամար առաստաղով։ Շինուած է 1704ին։ Ունի հետեւեալ արձանագրութիւններն՝ «Յիշեցէք ի Քրիստոս Ստեփանոս կաթիկոսոս եւ զմիտս Ստեփանոս եւ զմիտս Կոլաժիւրին եւ զԴրոշնց Կարապետին եւ զմիտս Նահապետին եւ զԴաւիթ եւ զտէր Աւետիսին եւ Կրկանց Աւետիսին, Գրիգորին, թվ. ՌՃԾԳ»³ (Ազգր. Հանդ., 1912, էջ 100)։ Գարձեալ՝ «Ի հայկազեան մեծ թվականին եւ ի քսան եւ երեք յորեկանին եղև մոյ այլ ընմին (?) եղև շինումն այս տաճարին ձեռամբ մերոյ հայրապետին Դաւիթ եւ Յովհաննէս վարդապետին եւ որդի Խղաթին ՌՃԾԳ» (Ազգր. Հանդ., 1912, էջ 100. Բիւզանդիոն, 1904, Թ. 2232)։

Ամենափրկիչի վանքը ունի կոնդակ մը, որուն համեմատ հին հիմնարկութիւն է։ Յայտնաւորքէն քաղուած սոյն կոնդակը կ'աւանդէ թէ՛ Գասպար մոզք Յիսուս մանուկի փափկիկ մազերէն նուէր կը ստանայ եւ տեսլեան մը վրայ երեք մոզքեր կը շինեն

³ Այս արձանագրութիւնը «Բիւզանդիոն»ի մէջ (1904, Թ. 2232) գրուած է այսպէս՝ «Յիշեցէք ի Քրիստոս զՍտեփաննոս կաթիկոսոս, զմիտս Ստեփաննոս զմիտս Գոլաժիւր եւ Արշնց Կրպ. եւ Արիս. եւ զմիտս Խպ. եւ զԴաւիթ եւ զտէր Աւետիս եւ զԳրիկնց Աւետիս եւ զԳրգրն., թվին ՌՃԾԳ»։

² Բնաշխ. Բառարանի հեղինակը Ծպատ եւ Ծպատ կը նոյնացնէ (անդ, Բ., էջ 238)։